ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018թ. հունվարի 19 **N 7-Ա**

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈՓՈԽՎՈՂ ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 20-րդ հոդվածով, <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի հաստիքացուցակը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի 2018 թվականի հաստիքացուցակում տվյալ պաշտոնում աշխատանքային ստաժի համապատասխան քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի նկատմամբ փոփոխվող բազմապատիկ գործակիցներն ըստ ամիսների՝ համաձայն N 2 հավելվածի:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ